

ՀՏԴ 911.2(479,243)

Ֆիզիկական աշխարհագրություն

*Յուրի Առաքելյան,
աշխ. գիտ. թեկ., դոցենտ, ԱրՊՀ
Ռուբինա Թովմասյան, ԱրՊՀ
Էլ. Հասցե՝ srbuhi.tovmassian@mail.ru*

ԳԵՅԱՆԻ ՏՄՓԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արցախում աշխարհագրական անվանումները կազմավորվել են հազարամյակների ընթացքում և իրենց վրա կրում են պատմական և մշակութային գործունեության կնիքը:

Ժամանակի ընթացքում տեղանունը տառադարձվում, ձևափոխվում, հնչյունափոխվում և անճնաչելի է դառնում նախնական ձևի հանդեպ: Այդ ճակատագրին է արժանացել նաև Արաքսի միջին հովտի ձախափնյա մասը, որը նախկինում կոչվել է Գեհենի հարթավայր: Հարմար ենք գտնում նշված դաշտն անվանել Գիհոն՝ ի պատիվ Աստվածաշնչում Արաքս գետի անվանման հետ:

Բանալի բառեր՝ Տեղանուն, տառադարձություն, լանդշաֆտ, քարտեզ, Գեյան, գետ, Գիհոն, Արաքս, տափաստան, հարթավայր:

*Юрий Аракелян,
кандидат географических наук, доцент АрГУ
Рубина Товмасыан, АрГУ*

ЭТИМОЛОГИЯ АРМЯНСКОЙ ТРАНСКРИПЦИИ НАЗВАНИЯ ГЕЯНСКОЙ СТЕПИ

Географические названия Арцаха сформировались в течении тысячелетий и носят на себе отпечаток исторической и культурной деятельности.

Со временем топонимы транскрибируются, видоизменяются, модифицируются и становятся неузнаваемыми по отношению к первичной форме. К этой судьбе удостоилась также средняя часть левобережья реки Аракс которая в прошлом называлась Гехенской равниной. Считаем подходящим вышеуказанную степь переименовать Гихон, в честь названия реки Аракс в Библии.

Ключевые слова - Топонимия, транскрипция, ландшафт, карта, Геянь, река, Гихон, Аракс, степь, равнина

*Yuri Arakelyan ,
Candidate of Geographical Sciences, ArSU
Rubina Tovmasyan , ArSU*

THE ETYMOLOGY OF THE ARMENIAN TRANSCRIPTION OF THE GEYAN STEPPE'S NAME

The geographical names in Artsakh have been formed during a period of thousand years and bear on them the stamp of the historical and cultural activity.

Over time, a placename transcribes, transforms, modifies and becomes irrecognizable towards the primary form becoming impermeable. The left part of the middle valley of Araks also deserved this fate, which primary was named the Gehen plain. We find it convenient to call that field- Gihon, in honor of the name of the river Araks in Bible.

Key words - Placename, transcription, landscape, map, Geyan, river, Gihon, Araks, steppe, plain

Արցախի Հանրապետության տարածքում աշխարհագրական անվանումները կազմավորվել են հազարամյակների ընթացքում և իրենց վրա կրում են հայ ժողովրդի պատմական և մշակութային գործունեության կնիքը:

Պատմական հուշարձանների հետ մեկտեղ մեր նախնիներից ժառանգված աշխարհագրական անվանումները մեր երկրի ինքնատիպ մատենագրությունն են: Տեղանուններն, ի տարբերություն այլ հնագիտական արժեքների, իրենց մեջ կրում են ժողովրդի լեզվական, հնչյունային և պատմական հիշողությունները, որը հատկապես բարձրացնում է տեղանվանման պատմական և տեղեկատվական արժեքը:

Յուրաքանչյուր անվանման մեջ առկա է կոնկրետ պատմական իմաստ, որն իր արմատներով սերտորեն կապված է ազգային մշակույթի և պատմության հետ:

Արտագույնից ազգային առանձնահատկությունը, տեղանունը հանդիսանում է մեր ազգի պատմամշակութային ժառանգության բաղկացուցիչ մասը, որն արժանի է հոգատար վերաբերմունքի և պահպանության:

Ամեն մի անհետացած տեղանուն անփոխարինելի կորուստ է հանդիսանում, որն աղքատացնում է մեր աշխարհագրական լանդշաֆտը:

Օտարահունչ և ձևափոխված անվանումները կորցնում են իրենց ազգային նկարագիրը, լեզվական յուրահատուկ առանձնահատկությունը, պատմամշակութային և գիտական արժեքը:

Պետք է նշել, որ ժամանակի ընթացքում տեղանունը տառադարձվում, ձևափոխվում, հնչյունափոխվում և անձանաչելի է դառնում իր նախնական ձևի հանդեպ, դառնալով անհասկանալի կամ անթափանց:

Ինչքան հին է տեղանվան ծագումը, այնքան այն շատ է ենթակա ձևափոխման՝ թե՛ լեզվական, թե՛ իմաստային առումով: Նման դեպքում անհասկանալի դարձած տեղանունը արտաքին նմանությամբ հարմարեցվում է առօրյա լեզվամտայնական իրավիճակին, տրվում մտացածին բացատրություն: Տեղանվանագիտությունը նման բացատրությունը կոչում է կեղծ էթիմոլոգիա կամ ժողովրդական ստուգաբանություն:

Հայոց թշնամիները մեր ժողովրդին հաղթելու առաջին գործոնը մշտապես դիտել են ոչ միայն անվերապահ բնաջնջելու, այլև, առաջին հերթին, մեր բնակավայրերի և այլ աշխարհագրական օբյեկտների տեղանունները սեփականացնելու, աղճատելու, թարգմանելու միջոցով տիրելու մեջ:

«Չկա անուն, չի եղել և ժողովուրդ»․ սա հարատև ճշմարտություն է, որից միշտ չափազանց խորամանկորեն օգտվել և օգտվում են բոլոր նվաճողները:

Ներկայումս նախկին միութենական հանրապետությունների քարտեզների վրա գրեթե իսպառ վերացել են իրենց համար օտար հնչեղություն ունեցող աշխարհագրական օբյեկտների անվանումները՝ փոխարինվելով նոր անուններով կամ էլ վերականգնելով պատմական հին անունները:

Հիմա մենք ենք մեր երկրի տերը և մեր տեղանունների անվանակոչման իրավունքը մերն է: Այսօր մենք պատասխանատու ենք թե՛ անցյալի, թե՛ ապագայի առաջ: Անցյալում մեր տեղանունները աղավաղում ու փոխում էին թշնամիները, այսօր մենք ենք վերականգնման անվան տակ հաճախ աղավաղում աշխարհագրական օբյեկտների անունները:

Արցախյան հողի վրա ոչ մի տեղ չկան պատմական անուն չունեցող աշխարհագրական օբյեկտներ, լինի դա խոշոր, թե մանրանուններ, երբեմն այնքան հին են, որքան հայոց լեզուն, և որպես լեզվի հնության ապացույց, որպես պատմության ապացույց, դրանք պետք է վերադարձվեն Հայաստանի աշխարհագրական օբյեկտներին: Արցախի տեղանունների համակարգը մերթ ընդ մերթ խաթարվել է օտարահունչ անուններով: Հարևան քոչվոր ցեղերը նախ՝ դաշտային, հետո՝ լեռնային Արցախում, անցնելով նստակյաց կյանքի, առաջին հերթին նպատակատուղված թարգմանել են մեր տարածքի աշխարհագրական օբյեկտների անունները, կամ ուղղակի տեղանունը հարմարեցրել են իրենց քիմքին:

Տեղանքը, որի մասին պետք է խոսել, գտնվում է Արաքս գետի միջին ավազանի ձախ ափը զբաղեցնող (այժմ տարածքի մի մասը գտնվում է նորակառուց Արաքսի ջրամբարի տակ) չոր տափաստանային և կիսանապատային տարածքում, որը պատված է կիսանապատային և չոր տափաստանային բուսականությամբ: Այն ձգվում է Հակարի գետից մինչև Ճղպորագետ, ծովի մակարդակից 200-500 մ բարձրությունների վրա: Գրական աղբյուրներում և քարտեզներում նշվում է Գեյանի տափաստան [10,11]: Այս տեղանվանման ծագումը մեր կարծիքով պայմանավորված է Արաքս գետի աստվածաշնչյան անվան հետ: Հայտնի է, որ ըստ Աստվածաշնչի՝ դրախտից սկզբնավորվել են Հայկական լեռնաշխարհի 4 խոշոր գետերը՝ Կուրը (Ֆեռն), Տիգրիսը (Դիկաթ), Եփրատը (Պրատ-Ֆուրատ), Արաքսը (Գիհոն, Գեհոն) [9]:

Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն բարձրավանդակի Սրմանց գագաթի փեշերից և բազմաթիվ վտակներ ընդունելով, հատելով մի քանի լեռնաշղթաներ և դաշտեր, ի վերջո խառնվում է Կուրին [4]: Ըստ Ստրաբոնի, Արաքսը միացած չէր Կուրին, այլ նրան զուգահեռ հոսելով՝ թափվում էր Կասպից ծով: Արաքսի հորդացումները և դրանից բխող հունի փոփոխությունները ծանր հետևանք են թողնում հատկապես Արարատյան, Մուխանքի, Միլիի դաշտերում [6]: Հայտնի է Արաքսի 1896թ. հորդացումը, երբ գետը Մուխանքի դաշտում ձեռք էլավ նստվածքները, փոխեց հունը և ողողեց 180 000 հա տարածություն: Հայկական աղբյուրների վկայությամբ՝ Արաքսի հունի փոփոխությունների հետևանքով ժամանակին գետը, հեռացել է Արմավիր, Վաղարշապատ, Արտաշատ քաղաքներից: Հին ցամաքած հունի տեղերը նշմարվում են նաև այսօր, բնակիչները դրանք անվանում են «Չոր Արաքս»: Ք.ա. առաջին դարում հռոմեական բանաստեղծ Վիրգիլիուսը Արաքսն անվանում էր «կամուրջներ չհանդուրժող գետ»:

Հունահռոմեական լեզվով կոչվել է Արախես, Արախիս, որը թարգմանաբար նշանակում է աղմկել: Պարսիկները, արաբները և թուրքերը կոչել են Արագ, վրացիները՝ Ռախի, Ռաքսի: Մ. Խորենացին կապում է Արամայիսի թոռան՝ Երաստի անվան հետ (Երասխ):

Ինչպես նշվեց, Արաքսը Աստվածաշնչում հիշատակվում է Գիհոն (Գեհոն) անվամբ, որը երբայերեն նշանակում է հարձակմամբ հոսել: Այլ կերպ է մեկնաբանում հայ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Ըստ նրա ստուգաբանության՝ նշանակում է խփել, խլել (նաև խփելով խլել) [1]: Ուշադրություն ենք հրավիրում այս վերջին մեկնաբանությանը:

Ֆրանսիացի ֆիզիկոս Գ. Կորիոլիսի օրենքի համաձայն՝ իր առանցքի շուրջը Երկրի պտտվելու արդյունքում առաջանում է ուժ, որի հետևանքով շարժվող մարմիններն իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում շեղվում են դեպի աջ (քանդելով ափը), հարավայինում՝ ձախ [3]: Քանի որ Արաքսը հոսում է Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի պետական սահմանի երկարությամբ (150 կմ), ապա, վերը նշված օրենքի համաձայն, Արաքս գետը (աջ ափի ամբողջ երկայնքով) Թուրքիայից «ազատագրում է» տարեկան միջինը 8-10 մմ տարածք:

Արաքսի Գեհոն (Գիհոն) անվանումը Աստվածաշնչում, միջնադարյան հայկական աղբյուրներում թարգմանվում է գահեր (բարձր տեղ իմաստով), իսկ երբայերեն՝ ցածր կամ սաստիկ հոսանքով հոսող [7]:

Արաքսի (Գիհոնի) բոլոր բնութագրումները համապատասխանում են նրա «բնավորությանը», այդքանով հանդերձ՝ Աստվածաշնչում այն անվանում են սրբազան գետ:

Իսկ ինչ վերաբերում է Գեյանի տափաստան անվանը, ապա ասենք, որ այն նախկինում կոչվել է Գեհենի հարթավայր: Մեր հարևաններին մնում էր միայն մի քանի տառերի հնչյունափոխություն կատարել, որպեսզի Գիհոնը վերածվի Գեյանի (ի-ն փոխարինել է-ով, հ-ն յ-ով, ո-ն՝ ա-ով):

Ներկայումս Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ, գյուղատնտեսության զարգացման գլխավոր ուղղություններից մեկը վերոհիշյալ տարածքի յուրացումն է, և մոտ ապագայում այս ամայի տարածքները վերածվելու են օազիս-դրախտի, որի անունն էլ պետք է հիշեցնի դրախտի գետերից մեկին՝ Գիհոնին:

Գրականություն

1. Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան, հատոր Ա, ԵՊՀ, 1971թ., էջ 532
2. Առաքելյան Յու. Ա, Նկատառումներ աշխարհագրական օտարազգի անունների հայերեն տառադարձության և «Թեոխ» անվան ստուգաբանության մասին, Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում, N-I, 1996թ., էջ 39-41
3. Գաբրիելյան Հ. Վ., Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական թաղանթը, ԵՊՀ, 1983թ., էջ 221-222
4. Հակոբյան Թ. Հ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան-1986թ., էջ 399-400 և 820
5. ՀՄՀ Հանրագիտարան, հ. 1, Երևան-1974թ., էջ 702-703
6. Հայաստանի բնաշխարհ (ընտանեկան հանրագիտարան), Երևան, 2006թ., էջ 143
7. Մեքաստացի Մ., Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. 1, ԵՊՀ, 1978թ.
8. Атлас Азербайджанской ССР, Баку-Москва, 1963г., էջ 21
9. Бойнагрян В. Р., Реки и речные долины Армянского нагорья, Ереван, 2009г., стр. 51-90
10. Справочная общегеографическая карта-Азербайджанская ССР, М. 1:600 000, ГУГ и К-М.-1984г.
11. Топографическая карта, М. 1:500 000, Территории НКАО, 1977г.